ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

~~Հոդված 18. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման եզրակացություն տալու կարգը~~

-

~~1. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման նպատակով լիազոր մարմինը հայտատուի դիմումում նշված պեստիցիդների և ագրոքիմիկատների յուրաքանչյուր տեսակի համար պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության արդյունքներն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տալիս է եզրակացություն:~~

~~2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննությունն իրականացվում է ներմուծող ֆիզիկական և իրավաբանական անձանց միջոցների հաշվին:~~

~~3. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման եզրակացությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվում է միայն Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկված պեստիցիդների և ագրոքիմիկատների մասին, բացառությամբ 3.1-ին մասով սահմանված դեպքի:~~

~~3.1. «Բուսասանիտարիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հրատապ կամ հատուկ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման եզրակացությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվում է, երբ առկա են տեղեկություններ պեստիցիդներ և ագրոքիմիկատներ ներմուծող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև նրանց կողմից ներմուծվող ապրանքի խմբաքանակի, այդ թվում՝ առևտրային անվանման, ազդող~~

~~նյութի, ազդող նյութի պարունակության, պատրաստուկային ձևի վերաբերյալ՝ պահպանելով սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգը։~~

~~4. Եզրակացություն ստանալու համար ֆիզիկական և իրավաբանական անձինք ներկայացնում են՝~~

~~1) դիմում (իրավաբանական և անհատ ձեռնարկատեր հաշվառված անձինք դիմումում տեղեկությունների շարքում ներկայացնում են նաև պետական գրանցման կամ հաշվառման համարը).~~

~~2) ֆիզիկական անձինք՝ անձնագրի պատճենը.~~

~~3) ներմուծվող պեստիցիդների և ագրոքիմիկատների նկարագրությունը (անվանումը, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագիրը, քանակը, թողարկման տարեթիվը, ձեռք բերելու վայրը).~~

~~4) պեստիցիդներ և ագրոքիմիկատներ ներմուծողները ներկայացնում են բուսասանիտարական հաշվառման վկայականը կամ դրա պատճենը։~~

~~5. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման մասին եզրակացությունը կազմվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը մնում է լիազոր մարմնում, իսկ երկրորդ օրինակը տրվում է հայտատուին։~~

~~6. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման մասին եզրակացություն ստանալու համար դիմողն իր ներկայացրած սխալ տեղեկությունների համար պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով։~~

~~7. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման մասին եզրակացություն տալու մերժումը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով։~~

~~8. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման մասին եզրակացություն տալու մերժման հիմք են սույն օրենքով նախատեսված փաստաթղթերի բացակայությունը կամ պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության բացասական արդյունքները։~~

~~***(18-րդ հոդվածը լրաց. 15.06.23 ՀՕ-219-Ն)***~~

~~***(հոդվածը 15.06.23 ՀՕ-219-Ն օրենքի 1-ին հոդվածի փոփոխության մասով գործում է եռամսյա ժամկետով մինչև 12.10.2023)***~~

«Հոդված 18. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման եզրակացություն տալու կարգը

1. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծումը կամ արտահանումն իրականացվում են հայտատուի դիմումում նշված պեստիցիդների և ագրոքիմիկատների յուրաքանչյուր տեսակի համար՝ լիազոր մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա: Եզրակացությունը տրամադրվում է պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ներմուծման դեպքի:

2. Կառավարության սահմանած դեպքերում պեստիցիդներն ու ագրոքիմիկատները ներմուծվում են առանց փորձաքննության՝ լիազոր մարմնի կողմից տրված եզրակացության հիման վրա:

3. Պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննությունն իրականացվում է ներմուծող ֆիզիկական և իրավաբանական անձանց միջոցների հաշվին:

4. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման եզրակացությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվում է միայն Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկված պեստիցիդների և ագրոքիմիկատների մասին, բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված դեպքի:

5. «Բուսասանիտարիայի մասին» օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման եզրակացությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվում է, երբ առկա են տեղեկություններ պեստիցիդներ և ագրոքիմիկատներ ներմուծող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև նրանց կողմից ներմուծվող ապրանքի խմբաքանակի, այդ թվում՝ առևտրային անվանման, ազդող նյութի, ազդող նյութի պարունակության,

պատրաստուկային ձևի վերաբերյալ՝ պահպանելով սույն օրենքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված կարգը:

6. Ներմուծման կամ արտահանման եզրակացություն ստանալու համար ֆիզիկական և իրավաբանական անձինք լիազոր մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ նշելով ներմուծվող և արտահանվող պեստիցիդների և ագրոքիմիկատների նկարագրությունը (առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն, գրանցող երկիրը, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագիրը, բանակը, թողարկման տարեթիվը, ձեռք բերելու վայրը, իրավաբանական անձի պետական գրանցման կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը՝ Կառավարության սահմանած դեպքերի հաշվառմամբ),

2) ֆիզիկական անձինք՝ անձնագրի պատճենը.

3) բուսասանիտարական հաշվառման վկայականը կամ դրա պատճենը.

4) օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ ներմուծվող կամ արտահանվող խմբաքանակի համար՝ փորձարկման լաբորատորիայի կողմից տրամադրված փորձարկման արդյունքներն արձանագրած փաստաթուղթը և այն պեստիցիդի կամ ագրոքիմիկատի ներմուծվող խմբաքանակին նույնականացնող փաստաթուղթը:

7. Լիազոր մարմինը պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության արդյունքները ստանալուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում տալիս է եզրակացություն, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի հիման վրա ներմուծվող պեստիցիդների և ագրոքիմիկատների, որոնց համար եզրակացությունը տրամադրվում է սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

8. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման մասին եզրակացությունը տրամադրվում է էլեկտրոնային եղանակով: Առձեռն՝ թղթային եղանակով (անհաղթահարելի ուժի առկայության, ինչպես նաև արտահանվող երկրներ

թղթային եղանակով ներկայացնելու անհրաժեշտության դեպքում) տրամադրելիս՝ եզրակացությունը կազմվում է երկու օրինակից, որի մեկ օրինակը մնում է լիազոր մարմնում, իսկ երկրորդ օրինակը տրվում է հայտատուին:

9. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման մասին եզրակացություն ստանալու համար դիմողն իր ներկայացրած սխալ տեղեկությունների համար պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով:

10. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման մասին եզրակացություն տալու մերժումը հայտատուն կարող է բողոքարկել դատական կարգով:

11. Պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման մասին եզրակացություն տալու մերժման հիմք են սույն օրենքով նախատեսված փաստաթղթերի բացակայությունը կամ պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության բացասական արդյունքները: